ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

20 հունվարի 2015 թվականի **թիվ 2** քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի «Մաքսային միության «Ճարպայուղային արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 024/2011) տեխնիկական կանոնակարգում փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 52–րդ հոդվածին համապատասխան.

1. Հավանություն տալ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի «Մաքսային միության «Ճարպայուղային արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» տեխնիկական կանոնակարգում փոփոխություններ կատարելու մասին» (ՄՄ ՏԿ 024/2011) որոշման նախագծին (կցվում է) եւ այն ներկայացնել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի քննարկմանը:

2. Սույն Կարգադրությունն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 10 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի նախագահ՝ **Վ. Խրիստենկո**

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

« » -ի 20 թվականի **թիվ** քաղ.

Մաքսային միության «Ճարպայուղային արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» տեխնիկական կանոնակարգում փոփոխություններ կատարելու մասին (ՄՄ ՏԿ 024/2011)

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 52-րդ հոդվածին եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի՝ 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 1 հավելվածի 29-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց**.

1. Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011 թվականի դեկտեմբերի 9–ի թիվ 883 որոշմամբ հաստատված Մաքսային միության «Ճարպայուղային արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» տեխնիկական կանոնակարգում (ՄՄ ՏԿ 024/2011) կատարել փոփոխություններ՝ հավելվածի համաձայն:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 6 օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**
Վ. Գաբրիելյան	**Ս. Ռումաս**	**Բ. Սագինտաեւ**	**Ի. Շուվալով**

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի

« » -ի 20 թվականի թիվ որոշման

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մաքսային միության «Ճարպայուղային արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» տեխնիկական կանոնակարգում կատարվող
(ՄՄ ՏԿ 024/2011)

1. «Բովանդակություն» բաժինը հանել:

2. 1–ին գլխի 1–ին կետում վերացնել «նրանց հետ կապված» արտահայտության մեջ տեղ գտած տեխնիկական վրիպակը:

3. 5–րդ հոդվածի 3–րդ կետում՝

ա) 2–րդ ենթակետում «սահմանման մեջ շարադրված, սույն Տեխնիկական կանոնակարգի 3-րդ հոդվածով եւ 3-րդ եւ 4-րդ հավելվածներով սահմանված» բառերը փոխարինել «սահմանումների մեջ նշված, սույն Տեխնիկական կանոնակարգի 2-րդ եւ 3-րդ հոդվածներով եւ 3-րդ եւ 4-րդ հավելվածներով նախատեսված» բառերով.

բ) 4-րդ ենթակետի առաջին նախադասության մեջ «սահմանման մեջ շարադրված, սույն Տեխնիկական կանոնակարգի 3-րդ հոդվածով եւ 3-րդ հավելվածով սահմանված» բառերը փոխարինել «սահմանումների մեջ նշված, սույն Տեխնիկական կանոնակարգի 2-րդ եւ 3-րդ հոդվածներով եւ դրա 3-րդ հավելվածով նախատեսված» բառերով:

4. 8-րդ հոդվածում՝

ա) Երկրորդ պարբերության առաջին նախադասության մեջ «3-րդ

հոդվածում եւ 3-րդ, 4-րդ հավելվածներում նշված հասկացությունների հիման վրա ձեւավորվող՝ մթերքի անվանման մեջ» բառերը փոխարինել «սույն Տեխնիկական կանոնակարգի 2-րդ եւ 3-րդ հոդվածներով եւ դրա 3-րդ եւ 4-րդ հավելվածներով նախատեսված սահմանումների հիման վրա ձեւավորվող՝ մթերքի անվանման մեջ» բառերով.

բ) 1-ին կետի առաջին նախադասության մեջ «3-րդ հոդվածով սահմանված անվանմամբ» բառերը փոխարինել «2-րդ եւ 3-րդ հոդվածներով նախատեսված սահմանումներով» բառերով.

գ) 2–րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«2. Սննդային ճարպայուղային արտադրանքի բաղադրությունը:

Սննդային ճարպայուղային արտադրանքի բաղադրությունը նշելու պահանջ չի սահմանվում մեկ բաղադրիչից բաղկացած սննդամթերքի համար, այն դեպքում, երբ սննդամթերքի անվանումը հանընկնում է բաղադրիչի անվանման հետ:».

դ) 10-րդ կետի 4-րդ ենթակետում «բուրավետիչների),» բառը փոխարինել «չկշռածրարված սննդային ճարպայուղային արտադրանքի համար նախատեսված բուրավետիչների):» բառերով:

5. 19-րդ հոդվածում՝

ա) 1–ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«1. Համապատասխանությունը գնահատելիս հայտատու կարող են լինել Մաքսային միության անդամ պետության տարածքում նրա օրենսդրությանը համապատասխան գրանցված իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձը, որոնք հանդիսանում են արտադրող կամ վաճառող կամ արտադրողի կողմից լիազորված անձ:».

բ) 3-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

6. 2-րդ հավելվածի անվանմանն ավելացնել «արտադրանքի» բառը: